ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԱՊՐԱՆՔԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀԲՄԱՊՁԲ-7/3-1

ք. Երևան 22.05.2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի պժկ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և "Ֆլեշ" ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Յա. Խաչատրյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում 4 529 258 536 (չորս միլիարդ հինգ հարյուր քսանինը միլիոն երկու հարյուր հիսունութ հազար հինգ հարյուր երեսունվեց) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը

կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է 15 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 10-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին, ապրանքատեսակի մասով գործարանային փաթեթավորումը կիրառելի է:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ՝ արտադրող գործարանի որակի անձնագրի և համապատասխանության սերտիֆիկատի առկայության դեպքում: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **հինգ** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ

ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ՝ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրություններ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն **ք. Երևան Բագրևանդի 5** **ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն** **Հ/Հ 900011144079** **ՀՎՀՀ 02522157** **ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ** **Կ. ԽԱՐԱՊԵՏՅԱՆ**	«Ֆլեշ» ՍՊԸ ք. Երևան, Եզնիկ Կողբացի 30, «Արարատբանկ» ԲԲԸ Հ/Հ 15100166690902 ՀՎՀՀ 01808789 տնօրեն **Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հավելված N1
N ՀԲՄԱՊՁԲ-7/3-1 ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՏԵՔՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/Հ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	Հ/մ	Տեխնիկական բնութագիրը
1	բենզին, պրեմիում /Ավտոբենզին Պրեմիում (ԱԻ-95) կտրոն	լ	ԳՕՍՏ 32513-2013 ՄՄՏՌ (Մաքսային միության տեխնիկական ռեգլամենտ)- 013/2011 Տեսակը՝ **ԱԻ-95** Ոչ էթիլացված բենզին՝ բենզինային շարժիչներով ավտոտրանսպորտի համար: - օկտանային թիվը հետազոտական մեթոդով՝ ոչ պակաս 95, շարժիչային մեթոդով՝ ոչ պակաս 85 - կապարի կոնցենտրացիան՝ ոչ ավել 5մգ/դմ^3, - խեժերի կոնցենտրացիան՝ ոչ ավել 50մգ/դմ^3, - ինդուկցիոն շրջանը՝ ոչ պակաս 360ր, - ծծմբի զանգվածային բաժինը՝ ոչ ավել 10մգ/կգ, - բենզոլի ծավալային բաժինը՝ ոչ ավել 1%, - օլեֆինային ածխաջրածինների ծավալային բաժինը՝ ոչ ավել 18%, - արոմատիկ ածխաջրածինների ծավալային բաժինը՝ ոչ ավել 35% - թթվածնի զանգվածային բաժինը՝ ոչ ավել 2.7%, - օքսիդիչների ծավալային մասը, ոչ ավելի՝ մեթանոլ-1%, էթանոլ-5%, իզոպրոպիլ սպիրտ-10%, իզոբուտիլ սպիրտ-10%, եռաբութիլ սպիրտ-7%, եթերներ (C5 և ավելի)-15%, այլ օքսիդիչներ-10%, - փորձարկում պղնձե թիթեղի վրա 3 ժամ 50°C-ում՝ համապատասխանում է 1-ին դասին, - արտաքին տեսքը՝ պարզ, մաքուր, - խտությունը 15°C-ում՝ 725-780 կգ/մ^3 - Mn և Fe կոնցենտրացիան՝ բացակայություն, - մոնոմեթիլանիլինի ծավալային բաժինը՝ ոչ ավել 1%, - հագեցած գոլորշիների ճնշումը՝ ամառային շրջանում 35-80 կՊա, ծմեռային և միջսեզոնային շրջանում 35-100 կՊա, - ֆրակցիոն կազմը. գոլորշիացված բենզինի ծավալային բաժինը. 70°C-ում՝ 15-50%, 100°C-ում՝ 40-70%, 150°C-ում՝ ոչ պակաս 75%, - եռման վերջը՝ ոչ բարձր 215°C, - կոլբայի մնացորդի ծավալային բաժինը՝ ոչ ավել 2 %, - գոլորշու խցանման առավելագույն ինդեքսը՝ 1350:
2	բենզին, ռեգուլյար /Ավտոբենզին Ռեգուլյար (ԱԻ-92)	տ	ԳՕՍՏ 32513-2013 ՄՄՏՌ (Մաքսային միության տեխնիկական ռեգլամենտ)- 013/2011 Տեսակը՝ **ԱԻ-92** Ոչ էթիլացված բենզին՝ բենզինային շարժիչներով ավտոտրանսպորտի համար: - օկտանային թիվը հետազոտական մեթոդ՝ ոչ պակաս 92, շարժիչային մեթոդով՝ ոչ պակաս 83 - կապարի կոնցենտրացիան՝ ոչ ավել 5մգ/դմ^3, - խեժերի կոնցենտրացիան՝ ոչ ավել 50մգ/դմ^3, - ինդուկցիոն շրջանը՝ ոչ պակաս 360ր, - ծծմբի զանգվածային բաժինը՝ ոչ ավել 10մգ/կգ, - բենզոլի ծավալային բաժինը՝ ոչ ավել 1%, - օլեֆինային ածխաջրածինների ծավալային բաժինը՝ ոչ ավել 18%, - արոմատիկ ածխաջրածինների ծավալային բաժինը՝ ոչ ավել 35% - թթվածնի զանգվածային բաժինը՝ ոչ ավել 2.7%, - օքսիդիչների ծավալային մասը, ոչ ավելի՝ մեթանոլ-1%, էթանոլ-5%, իզոպրոպիլ սպիրտ-10%, իզոբուտիլ սպիրտ-10%, եռաբութիլ սպիրտ-7%, եթերներ (C5 և ավելի)-15%, այլ օքսիդիչներ-10%, - փորձարկում պղնձե թիթեղի վրա 3 ժամ 50°C-ում՝ համապատասխանում է 1-ին դասին,

			- արտաքին տեսքը՝ պարզ, մաքուր, - խտությունը 15°C-ում՝ 725-780 կգ/մ³ - Mn և Fe կոնցենտրացիան՝ բացակայություն, - մոնոմեթիլանիլինի ծավալային բաժինը՝ ոչ ավել 1%, - հագեցած գոլորշիների ճնշումը՝ ամառային շրջանում 35-80 կՊա, ձմեռային և միջսեզոնային շրջանում 35-100 կՊա, - ֆրակցիոն կազմը. գոլորշիացված բենզինի ծավալային բաժինը. 70°C-ում՝ 15-50%, 100°C-ում՝ 40-70%, 150°C-ում՝ ոչ պակաս 75%, - եռման վերջը՝ ոչ բարձր 215°C, - կոլբայի մնացորդի ծավալային բաժինը՝ ոչ ավել 2 %, - գոլորշու խցանման առավելագույն ինդեքսը՝ 1350: Անվտանգությունը, փաթեթավորումը, մակնշումը և տեղափոխումը՝ համաձայն ԳՕՍ 1510-84-ի:
3	բենզին, ռեգուլյար /Ավտոբենզին Ռեգուլյար (ԱԻ-92) կտրոն	լ	ԳՕՍ 32513-2013 ՄՄՏՌ (Մաքսային միության տեխնիկական ռեգլամենտ)- 013/2011 Տեսակը՝ **ԱԻ-92** Ոչ էթիլացված բենզին՝ բենզինային շարժիչներով ավտոտրանսպորտի համար: - օկտանային թիվը հետազոտական մեթոդ՝ ոչ պակաս 92, շարժիչային մեթոդով՝ ոչ պակաս 83 - կապարի կոնցենտրացիան՝ ոչ ավել 5մգ/դմ³, - խեժերի կոնցենտրացիան՝ ոչ ավել 50մգ/դմ³, - ինդուկցիոն շրջանը՝ ոչ պակաս 360ր, - ծծմբի զանգվածային բաժինը՝ ոչ ավել 10մգ/կգ, - բենզոլի ծավալային բաժինը՝ ոչ ավել 1%, - օլեֆինային ածխաջրածինների ծավալային բաժինը՝ ոչ ավել 18%, - արոմատիկ ածխաջրածինների ծավալային բաժինը՝ ոչ ավել 35% - թթվածնի զանգվածային բաժինը՝ ոչ ավել 2.7%, - օքսիդիչների ծավալային մասը, ոչ ավելի՝ մեթանոլ-1%, էթանոլ-5%, իզոպրոպիլ սպիրտ-10%, իզոբուտիլ սպիրտ-10%, եռաբուտիլ սպիրտ-7%, եթերներ (C5 և ավելի)-15%, այլ օքսիդիչներ-10%, - փորձարկում պղնձե թիթեղի վրա 3 ժամ 50°C-ում՝ համապատասխանում է 1-ին դասին, - արտաքին տեսքը՝ պարզ, մաքուր, - խտությունը 15°C-ում՝ 725-780 կգ/մ3 - Mn և Fe կոնցենտրացիան՝ բացակայություն, - մոնոմեթիլանիլինի ծավալային բաժինը՝ ոչ ավել 1%, - հագեցած գոլորշիների ճնշումը՝ ամառային շրջանում 35-80 կՊա, ձմեռային և միջսեզոնային շրջանում 35-100 կՊա, - ֆրակցիոն կազմը. գոլորշիացված բենզինի ծավալային բաժինը. 70°C-ում՝ 15-50%, 100°C-ում՝ 40-70%, 150°C-ում՝ ոչ պակաս 75%, - եռման վերջը՝ ոչ բարձր 215°C, - կոլբայի մնացորդի ծավալային բաժինը՝ ոչ ավել 2 %, - գոլորշու խցանման առավելագույն ինդեքսը՝ 1350:
4	դիզելային վառելիք, ամառային /Ամառային դիզ. վառելանյութ	տ	ԳՕՍ 32511-2013 ՄՄՏՌ (Մաքսային միության տեխնիկական ռեգլամենտ)- 013/2011 - ցետանային թիվը 51-ից ոչ պակաս, - ցետանային ցուցիչը-46-ից ոչ պակաս, - խտությունը 15°C ջերմաստիճանում 820-ից մինչև 845 կգ/մ³, - պոլիցիկլիկ արոմատիկ ածխաջրածինների զանգվածային բաժին՝ ոչ ավել 8%, - ծծմբի զանգվածային բաժինը՝ ոչ ավել 10մգ/կգ, - բռնկման ջերմաստիճանը՝ ոչ պակաս 55°C, - 10% թորման մնացորդի կոքսելիություն՝ ոչ ավել 0.3%, - մոխրայնությունը՝ ոչ ավել 0.01%, - ջրի զանգվածային բաժինը՝ ոչ ավել 200մգ/կգ, - ընդհանուր աղտոտվածությունը՝ ոչ ավել 24 մգ/կգ,

			- պղնձե թիթեղի կոռոզիան 3 ժամ 50°C-ում՝ համապատասխանում 1-ին դասին, - կինեմատիկ մածուցիկությունը 40°C-ում՝ 2-4.5 մմ²/վրկ, - ֆրակցիոն կազմը՝ 250 °C-ում թորվում է ոչ ավել 65%, 350 °C-ում թորվում է ոչ պակաս 85%, ծավալի 95% թորվում է ոչ բարձր 360°C-ում, - զտման սահմանային ջերմաստիճանը՝ ոչ բարձր -5 °C: Անվտանգությունը, փաթեթավորումը, մակնշումը և տեղափոխումը՝ համաձայն ԳՕՍՏ 1510-84-ի:
5	դիզելային վառելիք, ամառային /Ամառային դիզ. վառելանյութ կտրոն	լ	ԳՕՍՏ 32511-2013 ՄՄՏՌ (Մաքսային միության տեխնիկական ռեգլամենտ)- 013/2011 - ցետանային թիվը 51-ից ոչ պակաս, - ցետանային ցուցիչը-46-ից ոչ պակաս, - խտությունը 15°C ջերմաստիճանում 820-ից մինչև 845 կգ/մ³, - պոլիցիկլիկ արոմատիկ ածխաջրածինների զանգվածային բաժին՝ ոչ ավել 8%, - ծծմբի զանգվածային բաժինը՝ ոչ ավել 10մգ/կգ, - բռնկման ջերմաստիճանը՝ ոչ պակաս 55°C, - 10% թորման մնացորդի կոքսելիություն՝ ոչ ավել 0.3%, - մոխրայնությունը՝ ոչ ավել 0.01%, - ջրի զանգվածային բաժինը՝ ոչ ավել 200մգ/կգ, - ընդհանուր աղտոտվածությունը՝ ոչ ավել 24 մգ/կգ, - պղնձե թիթեղի կոռոզիան 3 ժամ 50°C-ում՝ համապատասխանում 1-ին դասին, - կինեմատիկ մածուցիկությունը 40°C-ում՝ 2-4.5 մմ²/վրկ, - ֆրակցիոն կազմը՝ 250 °C-ում թորվում է ոչ ավել 65%, 350 °C-ում թորվում է ոչ պակաս 85%, ծավալի 95% թորվում է ոչ բարձր 360°C-ում, - զտման սահմանային ջերմաստիճանը՝ ոչ բարձր -5 °C:

Ծանոթություն՝ ՊՆ-ին տրվող կտրոններով լցավորող բենզալցակայաններում պատվիրատուի հայացողությամբ պարբերաբար կատարվում է վառելիքի որակի և քանակի ստուգում:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊՈՒՏԱՏԵՍՉԻ ՊԵՏԻ ՊԺԿ

Կ. ՀԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Ֆլեշ» ՍՊԸ
ք. Երևան, Եզնիկ Կողբացի 30,
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 15100166690902
ՀՎՀՀ 01808789

Յա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	Չ/մ	Քանակը	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	Մատակարարման վայրը		Մատակարարումը 2018թ-ին՝ ըստ եռամսյակների 2-րդ եռամսյակ
1	բենզին, պրեմիում /Ավտոբենզին Պրեմիում (Աի-95) կտրոն	լ	133 340	437	58269580	Աբովյան ՎՔՆ բազա՝	133 340 լ	133 340
2	բենզին, ռեգուլյար /Ավտոբենզին Ռեգուլյար (Աի-92)	տ	3 400	539000	1832600000	Աբովյան ՎՔՆ բազա՝	1 000 տ	3 400
						Ղալթախչիի ՎՔՆ բազա՝	1 500 տ	
						Գորիսի ՎՔՆ բազա՝	400 տ	
						Դիլիջանի ՎՔՆ բազա՝	200 տ	
						Երևանից 400կմ հեռավորության վրա միացյալ պահեստ՝	300 տ	
3	բենզին, ռեգուլյար /Ավտոբենզին Ռեգուլյար (Աի-92) կտրոն	լ	1 666 660	419	698330540	Աբովյան ՎՔՆ բազա՝	1 666 660 լ	1 666 660
4	դիզելային վառելիք, ամառային /Ամառային դիզ. վառելանյութ	տ	3 680	517500	1904400000	Աբովյան ՎՔՆ բազա՝	680 տ	3 680
						Ղալթախչիի ՎՔՆ բազա՝	1 600 տ	
						Գորիսի ՎՔՆ բազա՝	400 տ	
						Գավառի ՎՔՆ բազա՝	200 տ	
						Դիլիջանի ՎՔՆ բազա՝	500 տ	
						Երևանից 400կմ հեռավորության վրա միացյալ պահեստ՝	300 տ	
5	դիզելային վառելիք, ամառային /Ամառային դիզ. վառելանյութ կտրոն	լ	82 352	433	35658416	Աբովյան ՎՔՆ բազա՝	82 352 լ	82 352

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ ՊՆ ՆՏՎ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Ֆլեշ» ՍՊԸ
ք. Երևան, Եզնիկ Կողբացի 30,
«[illegible]» ԲԲԸ
[illegible]0902
ՀՎՀՀ 01808789
տնօրեն

Յա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված N2

N ՀԲՄԱՊՁԲ-7/3-1 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	CPV կոդ	Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ.-ին ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ. ընդ որում							
			մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	բենզին, պրեմիում /Ավտոբենզին Պրեմիում (ԱԻ-95) կտրոն	09132100/8/15/6	58269580	58269580	58269580	58269580	58269580	58269580	58269580	58269580
2	բենզին, ռեգուլյար /Ավտոբենզին Ռեգուլյար (ԱԻ-92)	09132400/1/15/13	1832600000	1832600000	1832600000	1832600000	1832600000	1832600000	1832600000	1832600000
3	բենզին, ռեգուլյար /Ավտոբենզին Ռեգուլյար (ԱԻ-92) կտրոն	09132200/11/15/6	698330540	698330540	698330540	698330540	698330540	698330540	698330540	698330540
4	դիզելային վառելիք, ամառային /Ամառային դիզ. վառելանյութ	09134240/2/15/13	1904400000	1904400000	1904400000	1904400000	1904400000	1904400000	1904400000	1904400000
5	դիզելային վառելիք, ամառային /Ամառային դիզ. վառելանյութ կտրոն	09134200/11/15/6	35658416	35658416	35658416	35658416	35658416	35658416	35658416	35658416

- *Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով:*

ՊԼՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ ՄԺԿ

Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

«Ֆլեշ» ՍՊԸ
տնօրեն

Յա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված N 3
N ՀԲՄԱՊՁԲ-7/3-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ՀԲՄԱՊՁԲ-7/3-1 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն